



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 017

« 18 » Սեպտեմբերի 2014թ

«Արփա-Սևան» ԲԲԸ-ի
գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեր կազմակերպության կայքից՝ <http://www.arpa-sevan.am/view-project-26.html>, տեղեկացանք, որ 2004-2012թթ.-ին «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից իրականացվել է Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի հավատարմագրային կառավարում, որի նպատակն է եղել ապահովվել այդ հանգույցով առավելագույն ծավալով ջրի տեղափոխումը Սևանա լիճ, որի արդյունքում ավելանում է Սևանա լճի ջրային պաշարները: Այդ նպատակը իրականացվում է «Որոտան-Արփա-Սևան» 70կմ ընդհանուր երկարությամբ թունելների անվտանգ ու անխափան շահագործմամբ, որի համար սպասարկվում և պահպանվում են 1) 40մ խորությամբ հորանային գլխամասային ջրընդունիչը: 2) տարբեր խորության 90մ-ից մինչև 662մ խորությամբ թվով 5 հորանները: 3) Կեչուտի ջրամբարը իր հիդրոտեխնիկական համալիր կառուցվածքներով: 4) բարա-հողային պատվար 47.3մ բարձրությամբ և 234մ երկարությամբ ջրընդունիչ: 5) 30մ խորությամբ հորանային ջրթող թունել: 6) 40մ խորությամբ հորանային կատաստրոֆիկ ջրթափ 270 մ3/վրկ ջրթողունակությամբ: 7) 4 ջրաչափական կառուցվածքներ, արագահոս ջրթափներ: 8) Եղեգիս գետի ջրընդունիչ և ջրհեռ հիդրոտեխնիկական կառուցվածքների համակարգը: 9) Սևանալիճ տեղափոխող 0.7կմ երկարությամբ ջրամատակարար ջրանցքը Արփա-Սևան թունելի էլքամասից:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրինոսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Գավառի Օրինոս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

✓ Ու՞մ կողմից է եղել աշխատանքների իրականացման պատվերը

- ✓ Ի՞նչ միջոցներով կամ ու՞մ ֆինանսավորմամբ են իրականացվել վերոնշյալ աշխատանքները և ինչքան է կազմել գումարը
- ✓ Ինչպիսի՞ արդյունք է ապահովել աշխատանքների ավարտին /կատարվել են վերոնշյալ 9 կետերն ամբողջությամբ, եթե ոչ, ապա նշել պատճառները/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն
Հարգանքով՝

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող



Լ. Ստյան